ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861—1917 թթ.), *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1985, 391 էջ։*

Հայ գաղթավայրերի պատմությունը մեր ժողովրդի պատմության անքակտելի մասն է կազմում, և վերջին երեսնամյակում ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում այդ պատմության ուսումնասիրության ուղղությամբ ձեռնարկված աշխատանքը լուրջ արդյունքներ տվեց։ Հրապարակի վրա են մի շարք աշխատություններ, որոնք լավ ընդունելություն գտան թե գիտական և թե ընթերցող լայն հասարակության շրջաններում, թե մեզանում և թե սփյուռքում։ Բնականաբար, այդ ուղղությամբ տարված աշխատանքները առավել արդյունավետ էին Ռուսաստանի և Ուկրաինայի գաղթավայրերի պատմության ուսումնասիրման բնագավառում, և դա առաջին հերթին բացատրվում է փաստական բազմակողմանի նյութի առատությամբ և մատչելիությամբ։ Հենց վերջին հանգամանքն էր, որ հնարավորություն տվեց լույս աշխարհ հանելու ոչ միայն ընդհանրացող աշխատություններ, այլև թեմատիկ բնույթի և առանձին գործիչներին նվիրված հետազոտություններ (գրքեր, հոդվածներ, հրապարակումներ)։

Նշված գրականության մեջ իրենց արժանի տեղն են գրավում Վ. Բարխուդարյանի մենագրությունները՝ նվիրված Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությանը։ Առաջին մենագրության լույս ընծայումից տարիներ անց, հեղինակը համեմատաբար վերջերս, ընթերցողի սեղանին դրեց իր երկրորդ գիրքը, որով և ամփոփվում է հայկական այդ նշանավոր գաղութի ամբողջական պատմությունը։

Ռուսահայ գաղութների մեջ XIX—XX դարերում իր տնտեսական և մշակութային կյանքի գրսևորումներով, հայ-ռուսական մշակութային շփումներին ցուցաբերած ակնառու մասնակցությամբ Նոր Նախիջևանը, թերևս, ամենաառաջատար դիրքերում էր կանգնած։ Եվ դա պայմանավորված էր չէ թե միայն գաղութի աշխարհագրական դիրքով, որը Կովկասն ու Անդրկովկասը Ռուսաստանին միացնող մի հանգուցակետ էր։ Նոր Նախիջևանի հայկական գաղութի նման նշանակությունը պայմանավորված էր թերևս առաջին հերթին տնտեսական զարգացման լայն հնարավորություններով, որոնք, մանավանդ մինչև 1870-ական թվականները, երաշխավորված էին կառավարական լայն իրավանորմերով, ասել է թե՝ առանձնաշնորհումներով։

Ինչպես և առաջին մենագրությունը, այս աշխատությունը ևս հեղինակը շարադրել է փաստական հարուստ նյութերի հիման վրա։ Դրանց մեջ առաջնայինը արխիվային նյութերն են, որ հեղինակը քաղել է Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվի, ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվի, ՍՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվի, Հոկտեմբերյան հեղափոխության կենտրոնական պետական արխիվի և Ռոստովի մարզային պետական արխիվի համապատասխան ֆոնդերից։ Նա շրջանառության մեջ է դրել նաև ձեռագրական նյութերը։ Գրքում առատորեն օգտագործված են նաև հայերեն ու ռուսերեն պարբերական մամուլը, ինչպես և ուսումնասիրման խնդիրներին առնչվող գրականությունը։ Սա փաստական այն ատաղձն է, որի քննական օգտագործման հիմքի վրա հեղինակը կառուցել է իր մենագրությունը, հանդես գալով փաստական նյութի ոչ թե էմպիրիկ շարադրողի, այլ այդ նյութը վերլուծաբար մեկնաբանողի, օրգանական մի ամբողջական աշխատություն ստեղծողի դերում։ Այս առիթով չենք կարող չշեղվել ու չնկատել, որ հենց նման մոտեցման պայմաններում է, որ պատմագիտական երկը դառնում է մնայուն, և ընդհակառակը, դրա բացակայության դեպքում է, որ այն դառնում է օրապակաս, վաղանցիկ և շատ շուտով մոռացության մատնվում՝ որքան էլ որ դրանց հեղինակները շանան հանդես գալ «պատմաբան-տեսաբանի» հավակնությամբ։ Ցավոք, մեր պատմագիտական գործերում վերջին տիպի աշխատությունները դեռևս բացառություն չեն կազմում։

Վ. Բարխուդարյանի մենագրությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից և ամփոփումից (ռուսերեն)։ Հարկ չենք համարում, և չի էլ պատշաճում հանգամանորեն վերաշարադրել գրքի բովանդակությունը։ Դա ընթերցողը առանց մեր օգնու-

թյան էլ կարող է իմանալ գրքին ծանոթանալիս։ Ավելի նպատակահարմար ենք գտել առանձնացնել այն հարցերն ու խնդիրները, որոնք կազմում են գրախոսվող աշխատության առանցքը, և ցույց տալ, թե որքանով է հեղինակին հաջողվել լուսաբանել դրանք։

Ինչպես և պետք էր սպասել, առաջին հարցը, որին հանգամանորեն անդրադարձել է հեղինակը, դա գաղութի իրավական դրության խնդիրն է ետոեֆորմյան շրջանում։ Ով քիչ թե շատ ծանոթ է ռուսահայ գաղութների պատմությանը, նա չի կարող չնկատել, որ այս հարցը այդ գաղութների կյանքում վճռական նշանակություն ունեցող հանգամանք էր և կապված էր դրանց թե իրավական վիճակի և թե մանավանդ տնտեսական զարգացման հնարավորությունների ու հեռանկարների հետ։ Խոսքը առանձնաշնորհումների մասին է, որոնք ռուսական կառավարությունը սկսեց քայլ առ քայլ սահմանափակել և ապա վերացնել՝ մի գաղութում ավելի շուտ, մյուսում՝ մի փոքր ավելի ուշ։ Վ. Բարխուդարյանը բանիմացությամբ և փաստական նյութի առատ օգտագործմամբ քննել և լուսաբանել է այս հարցը, միաժամանակ ցույց տվել այն պայքարը, որ գաղութում մղվում էր ինքնավարության պահպանման համար, Նոր Նախիջևանն ու Դոնի Ռոստովը իրավական առումով միացնելու դեմ։ Նա ցույց է տվել, որ թեև 1870 թ. Նոր Նախիջևանի քաղաքային մագիստրատը վերացվեց, բայց Դոնի հայ բնակչությունը դեռ երկար ժամանակ ավանդաբար շարունակում էր իր համայնական, ինչ-որ չափով ինքնավար կյանքը, որ գաղութում առաջացած բարեգործական ընկերությունները փաստորեն փոխարինել էին ինքնավարական նախկին մարմիններին։ Այս առումով հեղինակը ուշադրավ շարադրանք է նվիրել Նախիջևանի քաղաքային դումայի և քաղաքագլխի ֆունկցիաների բացահայտմանը, ցույց տալով, որ բարեգործական ընկերությունների հետ միասին դրանք ևս շարունակեցին մագիստրատի նախկին գործունեությունը, իհարկե, ոչ նախկին չափերով և իրավունքներով։

Գրքում կարևոր տեղ է տրված Նոր Նախիջևանի և հարակից հինգ հայկական գյուղերի բնակչության տեղաշարժին 1868—1914 թթ.։ Մատնանշված է, որ այդ շրջանում քաղաքի բնակչությունը աճել էր 3,25 անգամ՝ 15.231-ից հասնելով 49.523 մարդու, իսկ գյուղակաները՝ 2,66 անգամ։ Հիմնավորված է այն իրողությունը, որ ի տարբերություն Դոնի զորքի մարզի (որի մեջ 1887 թվականից մտնում էր նաև հայկական գաղութը) մյուս շրջանների, Նոր Նախիջևան քաղաքի և հայկական գյուղերի բնակչության աճը մեխանիկական չէր։

Նոր Նախիջևանի հայկական գաղութը Դոնի ավազանի տնտեսապես զարգացած շրջաններից էր։ Նրա տնտեսական զարգացումը ավելի արագ ընթացք ընդունեց 1870-ական թվականներից ի վեր՝ կապված երկաթուղային շինարարության հետ։ Գրախոսվող մենագրության մեջ լուրջ ուշադրություն է դարձված գաղութի սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանմանը. վերջինս կատարված է փաստական նյութի և տվյալների համեմատական համադրմամբ, հանգամանք, որը շարադրանքը դարձրել է համոզիչ և վավերական։

Փաստարկելով այն իրողությունը, որ կայսրության ամրողջ Հարավային երկրամասին հարուն նման հայկական գաղութը ևս գերազանցապես ագրարային շրջան էր, Վ. Բարխուդարյանը ցույց է տվել, որ, որպես այդպիսին, այն առաջնակարգ տեղ էր բռնում շրջակա մյուս մարզերի ու շրջանների շարքում։ Եվ դա հեղինակը իրավացիորեն բացատրում է գաղութում հողի առատությամբ։ Օրինակ, 1870-ական թվականներին հայկական գյուղերում մեկ շնչին բաժին էր ընկնում 8 դեսյատին հող (չհաշված արոտատեղիները)։ Գյուղատնտեսական զբաղմունքների մեջ առաջատարը դաշտավարությունն էր, մանավանդ «գարնովկա» տեսակի ցորենի մշակումը։ Հայ գյուղացիները մեկ դեսյատինից ստանում էին մոտավորապես 700—750 կգ հացահատիկ՝ այն ժամանակվա համար բավական բարձր բերքատվություն։ Գրքում լայն լուսաբանություն են գտել նաև գյուղատնտեսական մյուս զբաղմունքները, մանավանդ անասնապահությունը։

Ստոլեֆորմյան շրջանում կատարված տնտեսական տեղաշարժերի հետ սերտորեն առնչված՝ գրքում տրված է նաև գաղութում արդյունաբերության զարգացման պատկերը, շեշտված է, որ արդյունաբերական ճյուղերի մեջ գերակշիռ դիրքեր ունեին գյուղատնտեսական արտադրանքները վերամշակող ձեռնարկությունները՝ կենդանական յուղի ու ճարպի, բրդի ու կաշվի մշակման գործարանները։ Հեղինակը հաշվարկներով ցույց է տվել, որ Դոնի ավազանում բարձր էր դրանցից ստացվող եկամուտը. օրինակ՝ միայն բրդավաց ձեռնարկությունների արտադրանքը Նոր Նախիջևանում 1903 թ. կազմել էր 900 000 ռուբլի։ Հեղինակի աչքից չեն վրիպել նաև արդյունաբերական այնպիսի ճյուղերի զարգացումը, ինչպիսին էին աղյուսի, կղմինդրի, ծխախոտի, այլուրի, օղու և գինու, մակարոնի և արտադրական այլ ձեռնարկությունները։

Վ. Բարխուդարյանը միաժամանակ գիտական պատշաճ մակարդակով անդրադարձել է արհեստագործությանը։ Համեմատական վերլուծությունը նրան թույլ է տվել հանգել փաստերից

բխող այն ճիշտ հետևությանը, որ թեև կապիտալիզմի զարգացմանը համաքայլ արհեստները տասնամյակ առ տասնամյակ անկում էին ապրում, բայց դրանք դեռևս շարունակում էին նկատելի դեր խաղալ գաղութի (և ոչ միայն գաղութի) տնտեսական կյանքում։

Առևտրի զարգացումը հեղինակը սերտորեն առնչել է տնտեսական երկու կարևոր ճյուղերի՝ գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման հետ, ինչպես նաև այն իրողության հետ, որ Դոնի ավազանը, լինելով ջրային և ցամաքային ուղիների կարևոր հանգուցակետ, իր բնական այդօրինակ գիրքով ևս նպաստում էր առևտրի զարգացմանը գաղութում։ Գիտական շրջանառության մեջ դնելով փաստական հարուստ ու բազմաբնույթ նյութեր, հեղինակը ըստ ամենայնի բացահայտել է հայկական գաղութի մասնակցությունը մանրածախ և մեծածախ առևտրին, նրա դերը ներքին և արտաքին ապրանքափոխանակության մեջ։

Տնտեսական կյանքի հետազոտումը գրքում կատարված է ոչ միայն ինքնին այդ կյանքը բացահայտելու անհրաժեշտությամբ. հեղինակին միաժամանակ հաջողվել է ցույց տալ այն տեղն ու դերը, որ ուներ հայկական գաղութը կայսրության հարավի տնտեսական զարգացման բնագավառում։ Նոր Նախիջևանը «արդյունաբերության ընդհանուր ծավալով, համախառն արտադրանքի քանակով երկրամասի կարևոր կենտրոններից մեկն էր հանդիսանում,—գրում է հեղինակը։— 1880-ական թվականներին Ռոստով քաղաքի արդյունաբերական արտադրանքը, կլորացրած թվերով, հասնում էր 13,5 մլն ռ., Եկատերինոսլավինը՝ 1. 700 հազարի, իսկ Նախիջևանինը՝ 1,5 մլն. ռուբլու։ Նահանգի մյուս քաղաքների ֆաբրիկադործարանային արտադրանքը չէր մոտենում անգամ մեկ միլիոն ռուբլու։ Ռոստով քաղաքի արդյունաբերական արտադրանքի առյուծի բաժինը՝ շուրջ 12 մլն ռուբլին, գոյանում էր ծխախոտի ֆաբրիկաներից, որոնցում, ինչպես նկատեցինք, ծանրակշիռ էր հայ արդյունաբերողների դերը» (էջ 105)։ Նման եզրակացության հանգելու համար հեղինակը պետք է կատարեր վիճակագրական նյութի լուրջ մշակում, որը նա, իրոք, կատարել է շանասիրությամբ և հմտությամբ։

Հայտնի է, որ կապիտալիզմի զարգացման միտումներին համաքայլ ռուսահայ գաղութներից տեղի է ունենում արդյունաբերական և առևտրական կապիտալի արտահոսք դեպի կայսրության արդյունաբերական նշանավոր կենտրոնները, այնտեղ, որտեղ իր բնույթով կոմպոզիտական կապիտալը կիրարկման ավելի շահութաբեր ոլորտներ էր գտնում։ Այս երևույթը հատուկ էր նաև Նոր Նախիջևանին, և այն·չի վրիպել հեղինակի տեսադաշտից։ Սակայն դա միաժամանակ ցույց է տալիս, որ գաղութի տնտեսական դերը բնութագրելիս չպիտի սահմանափակվել միայն բուն Նոր Նախիջևանում արտադրության ոլորտում եղած կապիտալով։ Եվ Վ. Բարխուդարյանի գրքում չկա նման սահմանափակում. այնտեղ տրված է նաև հայ արդյունաբերողների մասնակցությունը մյուս վայրերի՝ մանավանդ Հյուսիսային Կովկասի, տնտեսական զարգացմանը, շեշտված են այդ մասնակցության տնտեսական ազդակները։

Գրքում հատուկ բաժին է նվիրված գաղութի հասարակական կյանքին։ Այս հարցը հեղինակը քննարկել է երեք հիմնական խնդիրներ լուսաբանելու կտրվածքով՝ ազգային բարեգործական հաստատությունները, գաղութը հայ-ռուսական հասարակական կապերի ոլորտում և նրա դիրքը արևմտահայության ազատագրության խնդրում։ Այս խնդիրները գրքում հանգամանալից լուսաբանություն են գտել՝ իրենց մեջ ներառնելով այլ հարցերի մի մեծ շրջանակ. դրանք են հասարակական միջոցառումները գաղութում, բարեգործական ընկերության գործունեությունը, գաղութի մասնակցությունը համառուսական հասարակական-քաղաքական կյանքին, կապը մայր հայրենիքի և հայկական գաղութների հետ և այլն։

Հեղինակը ուսումնասիրության հատուկ նյութ է դարձրել սոցիալ-քաղաքական պայքարը գաղութում, մասնավորապես առանձնացնելով երկու կարևոր հարց՝ Նոր Նախիջևանը և նարոդնիկական շարժումը և գաղութը պրոլետարական հեղափոխական շարժումների ժամանակաշրջանում։ Այս աղերսով ուշագրավ և բովանդակալից էջեր են նվիրված Փեշեքնրով եղբայրների նարոդնիկական խմբակին, բանվորական խմբակների ստեղծմանը, մարքսիստական գաղափարների տարածմանը, 1903 թ. հակահայկական օրենքին գաղութում ցույց տրված դիմադրությանը, ուսանողական ու գործադուլային շարժումներին և այլ հարցերի։

Հարուստ ու բովանդակալից էր Նոր Նախիջևանի հայկական գաղութի մշակութային կյանքը։ Ետռեֆորմյան շրջանում ռուսական մշակույթի բարերար ազդեցությունը կրելով հանդերձ, ինչպես ցույց է տրված գրքում, Նոր Նախիջևանը «ըստ էության հայկական ազգային մշակույթի կարևոր օջախներից մեկն էր» (էջ 266)։ Մշակույթի հարցերը գրքում բարձրացված և քննարկված են երեք հիմնական ուղղություններով՝ կրթական գործ, մամուլ, գրականություն և արվեստ։ Երեք դեպքերում էլ հեղինակը փաստական առատ նյութի հմուտ մեկնաբանն է. այդ նյութից ամ-

բողշական և կուռ շարադրանք ստեղծողը, շարադրանք, որը կարդացվում է հետաքրքրությամբ՝ լրացնելով նոր շրջանի հայ մշակույթի այդ բաց էջը։ Հեղինակը արժանին է հատուցել նաև մշակույթի գործիչներին, որոնցից մի քանիսի (Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան) գործունեությունը համազգային նշանակություն ուներ։

Մենք կանգ չառանք գրքում նկատվող առանձին աննշան բացերին ու վրիպումներին։ Նախ դրանք որակ չեն կազմում և առաջանում են սոսկ բազմաբնույթ հարցեր ընդգրկող այս աշխատությունը ընթերցելիս, երկրորդ, ինչպես դիտական արժեքավոր ամեն մի գործ՝ սույն գիրքը ևս ընթերցողին մղում է խորհելու և մտորելու։ Սա ևս մենք կդասեինք գրքի արժանիքների շարքը։ Այնուամենայնիվ, մի հարցի կապակցությամբ կուզեինք լրացման կարգով նշել հետևյալը. ինչպես ասվեց, հեղինակը հանգամանորեն անդրադարձել է գաղութի ինքնավարության վերացման հարցին։ Այս կապակցությամբ դրա պատճառների թվում պետք է նշել նաև հայ գաղթավայրերից երբեմն ակնկալվող տնտեսական ու քաղաքական շահագրգռվածության վերանալը։ Երբ հայ համայնքներին տրվում էին առանձնաշնորհումներ (XVIII դար), ցարական կառավարությունը լուրջ հույսեր էր կապում նրանց հետ երկրի հարավային շրջանների տնտեսական զարգացման, ինչպես նաև Արևելքում իր առաջխաղացման ծրագրերի իրականացման գործում։ Ստոեֆորմյան շրջանում այդ երկու ազդակները և դրանց հետ կապված ակնկալությունները վերացել էին, և կառավարությունը XIX դ. 30-ական թվականներից բռնեց հայերին տված արտոնությունների վերացման կուրս՝ Աստրախանում և Հյուսիսային Կովկասի գաղութներում այն իրագործելով ավելի շուտ, իսկ Ղրիմում և Նոր Նախիջևանում՝ մի փոքր հետո։

Ամփոփենք. մենք բնութագրեցինք սոսկ հիմնական խնդիրները, որոնք բարձրացված և քննարկված են գրախոսվող մենագրության մեջ, մի կողմ թողնելով տասնյակ այլ հարցեր, որոնց հետազոտումն ու լուսաբանումը միահյուսված են մեր կարծիքով գրքում առանցքային տեղ բռնող վերոհիշյալ խնդիրներին։ Վ. Բարխուդարյանի մենագրությունը իր ներառած հարցերի կարևորությամբ և մանավանդ դրանց խոր ու համակողմանի վերլուծությամբ արժեքավոր գործ է, ուստի և՝ կարևոր մի ներդրում սովետահայ պատմագիտության մեջ։

ՎԱՐԴԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր